№ 48 ՇԱԲԱԹ ԱՊՐԻԼԻ 29 — 1895 — ՇԱԲԱԹ ԱՊՐԻԼԻ 29 № 48

ՔՍԱՆԵՐԵՔԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբ.
Առանձին համարները 7 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ. Редакція «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».
Տելեֆոն № 253.

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.
Տելեֆոն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Մարիամեան Յովհաննեան դպրոցի հոգաբարձութիւնը պատիւ ունի յայտնելու, որ շաբաթ օր, ապրիլի 29-ին, Կուսանաց եկեղեցում կատարվելու է դպրոցիս հիմնադիր

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՍՏԵՓԱՆԵԱՆ ՅՈՎՀԱՆՆԵԱՆԻ

մահվան եօթներորդ տարեդարձի հոգեհանգստեան կարգը:

Պատարագի սկիզբն է առաւօտեան 10 ժամին:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Այդպէս էլ պէտք է լինէր. Անգլիացի կանանց համակրութիւնը. Հայոց հարցը և եւրոպական մամուլը.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Հրատարակչական ընկերութիւնը. Նիւթեր մեր արօտների ուսումնասիրութեան համար. Մաղինին Թիֆլիսում. Նամակ Բագուից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.—Եապօնիան և Ռուսաստանը. Նամակ Թիւրքիայից. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Նամակներ Թիւրքիայից.

ԱՅԴՊԷՍ ԷԼ ՊԷՏՔ Է ԼԻՆԷՐ

—

Էջմիածնից ստացած մեր վերջին տեղեկութիւնը վերին աստիճանի ուրախալի է.—ամենայն հայոց կաթողիկոսը յանձնարարել է սինոդի նախանդամ Երեմիա եպիսկոպոսին, կարգադրել թէ սինոդի և թէ Էջմիածնի գործերը, իբրև լիազօր տեղակալ, Էջմիածնի գահակալի բացակայութեան ժամանակ:

Իսկապէս այդ տողերը կարող են զարմանք պատճառել այն մարդկանց, որոնք ծանօթ չեն այն բոլորին, ինչ որ կատարվում էր Էջմիածնում վերջին ամիսների ընթացքում: Ասում ենք զարմանք կարող է պատճառել, քանի որ օրէնքով, Էջմիածնի կանոններով, ամենայն հայոց կաթողիկոսի բացակայութեան ժամանակ՝ տեղակալը, այսինքն սինոդի և Էջմիածնի գործերը ղեկավարողը՝ սինոդի նախանդամը պէտք է լինի, որ ներկայ դէպքում Երեմիա եպիսկոպոսն է, և որը, ինչպէս յայտնի է, տեղակալութեան պաշտօնը վարեց Մակար կաթողիկոսի մահվանից յետոյ ամբողջ երկու տարի, մինչև որ Էջմիածնի նոր գահակալը Երուսաղէմից հասաւ մայր-աթոռը:

Սակայն այն օրից, երբ ամենայն հայոց կաթողիկոսը հեռացաւ Էջմիածնից, սկսեցին տարածվել ամենահրէշաւոր լուրեր,—որ իբրև թէ Երեմիա եպիսկոպոսը այլ ևս տեղակալ չէ, որ տեղակալի պաշտօնը վարում է Մեսրոպ արքեպիսկոպոս Սմբատեան, որ սինոդի գործերը կանգ են առել, որ սինոդի բոլոր օրագրութիւնները ընթացք չը պէտք է ստանան, այլ պէտք է ուղարկվեն Վեհափառին, որտեղ և լինի նա, որ սինոդի նախանդամի պաշտօնը վարում է Երեմիա եպիսկոպոսը, բայց Էջմիածնի վանքի գործերը կառավարում է Սմբատեան արքեպիսկոպոսը և այլն և այլն...

Մենք սկզբում հաւատալ անգամ չէինք ուզում այդ բոլորին,—քանի որ Էջմիածնի վերջին սարկաւագն անգամ գիտէ, որ տեղակալը նա է, ով որ սինոդի նախանդամն է, և որովհետև սինոդի նախանդամը այսօր Երեմիա եպիսկոպոսն է, ուստի տեղակալի պաշտօն վարել չէ կարող Սմբատեանը, որը մինչև վերջին օրերս Շամախու թեմի առաջնորդ էր, թէև, մեզ անծանօթ պատճառներով, վաղուց նստած է Էջմիածնում:

Սակայն մենք ստիպված եղանք ականջ դնել այդ լուրերին, երբ տեսանք, որ նոյն իսկ Էջմիածնի պաշտօնական օրգանը, „Արարատը“ սկսում է իր էջերում, թէև մի փոքր զղջունի կերպով, յիշատակել Սմբատեանին իբրև տեղակալ: Միայն այժմ մենք հասկացանք, որ դա էլ „Արարատի“ երեխայ-խմբագրողների սովորական երեխայութիւններից մէկն է, որոնք դեռ այնքան խակ են, որ չեն կարողանում օրէնքի պահանջը և կանոնը զանազանել իրանց մանր-մունր կրքերից...

Եւ ահա այժմ ամենայն հայոց կաթողիկոսը վերջ տուեց այդ բոլոր անախորժ, անհաճոյ, նոյն իսկ անհաւատալի լուրերին և թիւրիմացութիւններին, յայտարարելով ի գիտութիւն ամբողջ Էջմիածնի, որ սինոդի նախանդամն է տեղակալը, և ուրեմն տեղակալութեան իրաւունքը պատկանում է Երեմիա եպիսկոպոսին և ոչ մի ուրիշին, քանի որ այդ եպիսկոպոսն է սինոդի մէջ աւագ անդամը...

Եթէ վաղը, սինոդի անդամ հաստատվելով, նախանդամ կը լինի մի Մեսրոպը արքեպիսկոպոս, կամ մի Աղափիրեան Գրիգոր եպիսկոպոս, որոնք այդպիսով կարող են սինոդի մէջ աւագ-անդամ լինել,—անկասկած նա էլ կը լինի տեղակալը, իբրև աւագագոյն եպիսկոպոս,—բայց քանի որ այդ չը կայ, տեղակալը Երեմիա եպիսկոպոսն է:

Մենք անչափ ուրախ ենք, որ ամենայն հայոց կաթողիկոսը վերջ տուեց այդ թիւրիմացութիւններին, թիւրիմացութիւններ, որոնք բացի վնասից՝ Էջմիածնին ոչ մի օգուտ չեն կարող տալ:

Ասել ենք շատ անգամ և նորից կրկնում ենք,—մեզ համար անձնաւորութիւնները երկրորդ տեղ են բռնում, և մենք պահանջում ենք, որ օրէնքը, կանոնը, կարգը ոտի տակ չը տրվի՝ յօգուտ այս և այն անձի, յօգուտ սրա և նրա կամայականութեան:

Եւ գլխաւորապէս այդ տեսակէտից էլ Էջմիածնից ստացած վերջին լուրը մենք համարում ենք շատ ուրախալի:

ԱՆԳԼԻԱՑԻ ԿԱՆԱՆՑ ՀԱՄԱԿՐՈՒԹԻՒՆԸ

—

Անգլիական կանանց շրջանում սկսվել է մի մեծ մարդասիրական շարժում դէպի Թիւրքաց հայերի վիճակը: Նրանք յայտարարում են, որ պէտք է աչքի առաջ ունենան միայն ընդհանուր մարդկային տեսակէտը, միայն մարդասիրութիւնը, չեն խառնվում քաղաքական գործերի մէջ և հաշուի չը պէտք է առնեն քաղաքական տեսակէտներ:

Անգլուհիները ասում են. «Հեռու արևելքում, փոքր Ասիայի խորքերում ապրում է մի քրիստոնեայ, կուլտուրական, իր հալալ աշխատանքով ապրող ժողովուրդ, որ թշուառ կացութեան մէջ է գտնվում, մի ժողովուրդ, որը ապահովութիւն չունի նոյն իսկ կանանց և երեխաների կեանքի և պատուի վերաբերութեամբ. միթէ մենք, անգլուհիներս պէտք է անտարբեր նայենք մեր հայ քոյրերի վիճակի վրա: Միթէ մենք կարող ենք հանգիստ սրտով անցկացնել մեր առօրեայ կեանքը, երբ գիտենք, որ մեզ նման կանայք, որոնց համար սիրելի են և իրանց որդիները, և իրանց պատիւը, և իրանց կեանքը, այս նոյն միջոցին այնպիսի վիճակի մէջ են, որ ամեն րոպէ կարող են զրկվել այդ բոլորից և իսկապէս զրկվում են:»

Կանանց միջազգային միութեան նախագահուհի տիկին Ուօրնըը Սնոդ «Daily News» լրագրի ապրիլի 18-ի համարի մէջ տպել է մի նամակ խմբագրութեան, որի մէջ ցոյց տալով այն հասցէները, որտեղ կարելի է ստորագրել այն ընդհանուր ուղերձին, որ պատրաստել են անգլիական կա-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆԱՄԱԿՆԵՐ ԹԻՒՐՔԻԱՑԻՑ

I

Բաղէշ, մարտի 28-ին

Բաղէշի բանտին մէջ կան 7 խցիկներ, 10—12 մարդ պարունակելու չափ մեծութեամբ. բայց իւրաքանչիւրի մէջ կան այժմ 20—30 բանտարկեալներ, իրարու վրա խռնուած: Առողջապահիկ ոչ մի միջոցներ չը կան. կենդանեաց դարշ արտաթորութիւնը, մարդկանց կղկղանքը, մլուկ, լու և ոջիլ կուտակված են բանտարկեալներու հետ նոյն խղճիկներու մէջ: Բանտարկեալ հայերը իրենց պիտոյքը կը հոգան միմիայն դուրսէն զափթիաներու միջնորդութեամբ և այս պատճառով ստիպված են ամեն անգամ կրկինը վճարել: Զրկված արտաքին աշխարհի հետ ուղղակի յարաբերութիւն ունենալէն, դուրսէն ուղարկուած նամակները երբէք չեն հասնիր իրենց հասցէին. և ինչ որ նոցա թոյլ տրուի գրել, պէտք է լինի անպատճառ տաճկերէն, որի համար կը ծախսեն 2 ղրուշ, և կամ նոյն գնով ստիպուած են հատուցանել զափթիաներուն նրանց օրական կերակուրը:

Ըստ օրինաց, իւրաքանչիւր բանտարկեալ պիտի ստանայ 300 դրամ հաց. բայց իսկապէս կը ստանան 250 դրամ միայն, այն էլ խիստ կեղտոտ և վատ եփուած: Եւ յաճախ այս սնունդն իսկ կը զլանան: Ջուրը խմել անհար է. հայերը յաճախ կը խմեն «խուլաճի» ջուրը. այս տակառներու մէջ մնացած ջուրն է, որ Թուրքերը գործ են ածել իրենց աբդէստի համար (կրօնական մաքրութեան համար)—և եթէ մին համարձակի այս մասին բողոքել և արդարութիւն պահանջել, իսկոյն և եթ կը ձգուի մութ «գառագեղներու», որտեղ հայերը տաճկաց վայրագ քահանայից գերի կը դառնան:

Ահա բանտի մէջ պատահած դէպքերը.

Գասպար Խապոյեան, Մուշի Աղուզ գիւղէն. բանտապահը երկաթեայ կուռ շղթաներով հարուածելով՝ այս մարդու գլուխը և ձեռքերը բոլորովին ջախջախել է:

Սիրուն Մանոյեան՝ վարդենիսցի (Մուշ). զափթիաները բռնութեամբ գանակոծել են և խեղդել:

Միհրան Դամատեան, կ. պոլսեցի. բռնուած Մուշի մէջ. խիստ կերպով գանակոծուած և չարչարանքներու ենթարկուած: Մէկ ոտքը ջախջախած, ոտքերը և ձեռքերը շղթայակապ ուղարկեցաւ Բաղէշ:

Մելո Միսէյեան, Վրդո Պողոսեան՝ մուշեղաշէնցի (Մուշ). այնքան չարչարեցին բանտի մէջ, որ արձակվելէն մի քանի օր յետոյ մեռան երկուքն ալ:

Մկրտիչ Սղերդցեան՝ բաղէշցի. բանտէն ազատուելէն յետոյ անմիջապէս մեռաւ, դառն չարչարանաց հետևանօք:

Կիրակոս Աստուածատուրեան, Մօղրկանի գոնկրցու գիւղից. մեռաւ բանտի մէջ խիստ չարչարանաց միջոցին:

Մարտիրոս Սահակեան, Բղի գաւառի Արտղոնբերդ գիւղից. գրաւեցին ունեցած տաս օսմանեան լիրան և այնքան խիստ կերպով չարչարեցին, որ 15 օր բանտարկութենէ յետոյ մեռաւ Բաղէշի բանտի մէջ:

Մալխաս Աղաճանեան, Սերոբ Մալխասեան՝ Աւզուզցի. անխիղճ կերպով գանակոծելէն յետոյ Մալխասը չիկացած երկաթներով 8 տեղէ և Սերոբը 12 տեղէ դաղեցին. մէկ զափթիյէ իւր . . . դրաւ Սերոբի բերնի մէջ:

Յակոբ Սերոբեան՝ Աւզուզցի. մերկացուցին զգեստներէն, հանելով նոյն իսկ շապիկ ու անդրավարտիկը, այնքան գանակոծեցին, մինչև որ ուշաթափ անկաւ. այն ժամանակ երկաթեայ ամուր անցուցին պարանոցէն և ենթարկեցին զափթիաներու բռնաբարութեան և ապա ատրաչէկ պայտերով 16 տեղէ դաղեցին մարմինը. մի զափթիյէ իւր . . . դրաւ այս մարդու բերանի մէջ: Հինգ օր գիշեր և ցերեկ, անօթի և ծարաւ ստիպեցին նորան յոտընկայս մնալ. կրկին հարուածեցին, փետելով մազերը:

Սրգօ Մինասեան, Կարապետ Մալխասեան, Գրօ Աստուածատուրեան՝ Աւզուզցի. խիստ կերպով գանակոծեցին, ստիպեցին երկար ժամանակ մնալ յոտընկայս և գլուխներու վրա թափեցին այն ամաններու պարունակութիւնն, որոնց մէջ բանտարկեալները սովորաբար կը հոգային իրենց բնական կարիքը:

Խաչիկ Մինասեան. Մէջ չառուշը, պարան մը վիզը ձգած, այնչափ քաշ տուեց, մինչև որ ուշաթափ գետին ընկաւ: (Ցիշեալը մշեցի էր):

Գորգէ Մարտոյեան՝ Շատախի Սէմալ գիւղէն. ենթարկվեցաւ անգութ և սարսափելի գանահարութեան, քաղեցին բոլոր մազերը մի առ մի, ստիպեցին յոտընկայս մնալ ամբողջ 24 ժամ. այն ժամանակ մելազիմ Հաճի Ալի, բանտապահ Աբդուլ-Բաղիր, ձեռքերը ու գլուխը միասին կապելով, ոտքերը իրարու հետ միացնելով իբրև շէյթան թօփի (սատանի գնդակ, մի տեսակ խաղ) ոտներով աքացելով իրարու կը նետէին, և այսպէս շարունակեցին մինչև որ հոգին աւանդեց: Գորգէ 45 տարեկան էր:

Գասպար Սիմոնեան՝ խարսեցի (Մուշ). Մէջ չառուշի, Իաքէնտէրի, և Հաճի Ֆայիմի հրամանով զափթիաները ծեծեցին 9 օր շարունակ, չէյթան թօփի անելով վերոյիշեալ կերպով և բռնաբարելով մինչև որ մեռաւ, 35 տարեկան հասակում:

Մխիթար Սափարեան, խաչո Բալոյեան խախարլուցի (Բուլանըխ). առաջին 15, իսկ երկրորդը 13 տարեկան, զափթիաներու լպիրշ բռնաբարվելանց և անսանձ կրից զոհ եղան երկուքն ալ:

Սողո Շարոյեան ալվարինցի (Մուշ). 9 հոխանոց երկաթեայ անուր վզին և ծանրագոյն շղթաներ ոտքին, քէլէփչէներ (ձեռնակապ) ձեռքին, ուղարկեցին Մուշէն Բաղէշ. ամբողջ 3½ ամիս զափթիաները զնա պահեցին իրենց սենեակներու մէջ. յետոյ երկար ժամանակ ստիպեցին զնա մնալ անսուաղ, գանակոծելով շարունակ, անպատկառ կերպով բռնաբարելով, և երբ այս խիստ տանջանաց տակ կը նուաղէր, իսկոյն պաղ ջուր լեցնելով կը վերակենդանացնէին և կը վերսկսէին չարչարանքները: Քաղեցին մազերը, չիկացած երկաթներով դաղեցին մարմինը: Սողո Դամատեանի ծառան է և 30 տարեկան հասակում:

Սաղաթէլ Միրզոեան՝ խոշկէլտէցի (Բուլանուխ), անօթի և ծարաւ ստիպեցին երկար ժամանակ յոտընկայս մնալ, փետելով մազերը, անխղճօրէն գանակոծելով և պարանը վիզն անցուցած քաշ տալով. երեք անգամ նուաղեցաւ. բանտապահը կապեց զնա սանդուղի վրա և կոշիկներով սկսաւ հարուածել երեսը, լանջը և կռնակը, թքնելով միանգամայն բերանում:

Մարգար Մանոյեան՝ վարդենիսցի. զափթիաները չարաչար կերպով գանակոծեցին Մուշեղաշէնի մէջ. Բաղէշ բերելիս ճանապարհի վրա կը

նայք՝ ուղարկելու իրանց հայկական քոյրերին, հրաւիրում է չը բաւականանալ այդ ուղերձով, այլ համակրութեան զգացմունքը արտայայտել և գործնական եղանակով։

Տիկին Սնօդը յիշեցնում է, որ տասնիններորդ դարու վերջում չը կայ օտար՝ անգլիացու համար, որ հայերը մարդկային ընտանիքի անդամներ են, որոնց վերաբերութեամբ պէտք է լինել վշտակից և օգնող։ Այդ է թելադրում և քրիստոնէական կրօնը, մանաւանդ այս Զատկի օրերին։

ՀԱՅՈՑ ՀԱՐՑԸ ԵՒ ԵՒՐՈՊԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԸ

I

Մենք անցեալ անգամ «Զարամիտ գրուածք» վերնագրով յօդուածում մի քանի խօսք ասեցինք այն մասին, թէ ինչպէս «Ռէյտերի գործակալութեան» նենգամիտ թղթակիցը աշխատում է ցոյց տալ, որ Թիւրքաց հայերի շարժումը կողմնակի ագիտացիայի արդիւնք է, և պատրաստւում է ուրիշ երկիրների հայերի ձեռքով։

Այդ նոյն թղթակցի գրուածքի առիթով Իորկշիրի Բրեդֆորդ քաղաքի «Bradford Observer» լրագիրը, ապրիլի 20-ի համարում, ասում է հետեւեալը. «Այստեղ քիչ նշանակութիւն են տալիս այդ գործակալութեան աղմկայոյզ թղթակցութեան։ Վաղուց յայտնի է, որ հայերի մէջ կայ յեղափոխական մասնաժողով, որի մի քանի անդամները նոյն իսկ Անգլիայում ես կան, բայց նրանք չունեն ոչ մարդիկ, ոչ փող և ոչ անհրաժեշտ զէնք՝ աջող ապստամբութեան համար։ Թիւրքերը շատ մեծ զինուորական ոյժ ունեն և կարող են իսկոյն փշրել մի այդ տեսակ փորձ։ Ինչ վերաբերում է Կ. Պոլիսը առնելուն, յեղափոխականները լաւ կանէին, եթէ փորձէին Մալթա կղզին վերցնելու։ Մի այդ տեսակ շարժման հետեւանքը կը լինէր միայն մեծ կոտորած, իսկ դրանք արդէն այնքան եղել են, որ բոլորովին բաւական է»։

II

Պարիզում հրատարակվող անգլիական «The Galignani Messenger» թերթի մէջ կարդում ենք, որ Անգլիայում մասնաւոր ժողովներ են կազմվում թէ Լօնդօնում և թէ գաւառական քաղաքներում, որոնց որոշումները ուղարկվում են կառավարութեան։ «Լօրդ Կիմբերլէյը այժմ, երբ մանաւանդ երեք փախստական սասունցիներ էլ երդում ընդունելով տուին իրանց ցուցմունքը, պարտաւոր է ներդործական դեր ընդունել և ընթացք տալ հասարակական կարծիքի այն պահանջին, որ այնպէս բարձրաձայն հնչվում է այժմ երկրի ամեն մասերում»։

III

«Times» լրագրի ապրիլի 25-ի համարում տպագրված են Լօնդոն գնացած սասունցի երեք փախստականների մանրամասն ցուցմունքները։

Այդ ցուցմունքները սասունցիները տուել են երդմնեցնող Էդուարդ Ալբէրտ Բելլի առաջ, որը և ապա այդ բոլորը յանձնել է լրագիրներին տպագրելու համար։

Ցուցմունքները հաստատում են Սասունի կոտորածը։

IV

Նորերս լոյս տեսած «The Aarménienn Crisis» գրքի մէջ տպագրված է Թիւրքաց Հայաստանի մի հարստահարված ընտանիքի պատկերը։ Այդ պատկերը արտատպել են ամերիկական հայ և ուրիշ լրագիրներ։

V

«The Galignani Messenger» թերթը մայիսի 1-ից հաղորդում է, թէ Արեւելքից ստացված տեղեկութիւններին նայած՝ հայկական քննիչ յանձնաժողովը գործնականապէս վերջացրել է իր պարապմունքները։ Ժողոված տեղեկութիւնները դատապարտում են Թիւրքաց վարչութիւնը և հիմք են տալիս պետութիւնների պահանջներին։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

—

Վաղը, կիրակի, ամսիս 30-ին, նշանակված է Հրատարակչական ընկերութեան տարեկան ընդհանուր ժողովը, որտեղ պէտք է կարդացվի անցեալ 1894 թւի գործունէութեան հաշիւը և ընտրվեն պաշտօնատար անձեր։

Հրատարակչական ընկերութիւնը իր վերջին տարիների գործունէութեամբ կարողացաւ սերտ կապ հաստատել հասարակութեան հետ և դարձաւ նրա սեփականութիւնը ոչ միայն ձեւական կերպով, այլ և էական, ներքին, բարոյական կերպով։ Ընկերութիւնը անդամներ ունի 50 հայրենակ տեղերում՝ քաղաքներում և գիւղերում, անդամների թիւը հասել է մինչև 365։ Տարեկան տպագրվում է ոչ պակաս քան 12 գիրք։ Ընկերութեան պաշտօնատար մարմինների գործավարութիւնը կանոնաւորված է։

Ընկերութեան տեղեկագրից իմանում ենք, որ 1894 թւին ընկերութիւնը ունեցել է 365 անդամ, որոնցից 13-ը մշտական, 352-ը իսկական անդամ. բացի այդ, զանազան քաղաքներում և գիւղերում մինչև 51 աշխատակից անդամ։ Ընկերութիւնը առ 1 յունվարի 1894 թւի ունեցել է 1335 ր. 90 կ. տարվայ ընթացքում ստացել է 4907 ր. 80 կ. ծախսել է 4093 ր. 87 կ., որոնցից 1215 ր. 52 կ. վճարած է հեղինակներին վարձ, 742 ր. 95 կ. տպագրութեան ծախք, թողթի 986 ր. 63 կ.։ Նախահաշիւը 1895 թւի համար կազմված է 7500 ռուբլու։

Այդ մի կողմից. սակայն միւս կողմից ժողովրդի ընթերցանութեան աստիճանաբար զարգացող պահանջը պարտաւորեցնում է ընկերութիւնը, չը բաւականանալ եղած առաջադիմութեամբ, այլ աւելի և աւելի լայնացնել իր գործունէութիւնը, և իրագործել նոր ծրագիրներ։

Մենք դեռ չունենք մեծ թւով հրատարակիչներ, գիրք տպագրող ուրիշ հիմնարկութիւններ, որոնք բաժանէին գրքերի հրատարակութեան կարևոր գործը։ Այդ գործը մեծ չափով ծանրացած է Հրատարակչական ընկերութեան վրա։ Ընկերութեան հրատարակութիւնները պարտաւոր են ժողովրդական ընթերցանութեան համար բաւարար նիւթ մատակարարել։

Ընկերութեան տպագրած գրքերը երկու տեսակի են. մի քանիսը ուղարկվել են ընկերութեան՝ հրատարակելու համար ուրիշ տեղերից, միւսները ընտրել է ինքը ընկերութիւնը։ Ի հարկէ, առաջին տեսակի գրքերի հրատարակութիւնը պէտք է շարունակել և ապագայում, նպաստելով այդպիսով այն պատահական ոյժերին, որոնք ինքնագործութեամբ, սեփական նախաձեռնութեամբ աշխատում են գրական ասպարէզում. բայց գլխաւոր ուշադրութիւնը պէտք է դրաւեն երկրորդ տեսակի գրքերը, հաստատ նպատակ դնելով կազմել ընթերցանութեան համար մի քանի շարք գրադարաններ, որոնց մէջ ժողովրդական հանրամատչելի և մանկական գրադարանները ամենամեծ տեղը բռնէին և այդպիսով այդ վաղուց չեշտված և յայտնված պահանջը լրացնէին։

Մենք հաւատում ենք, որ Հրատարակչական ընկերութեան գործունէութիւնը աւելի և աւելի կը լայնանայ, քանի որ ընկերութեան դրամական միջոցները օրից օր մեծանում են և, անկասկած, աւելի ևս կը մեծանան։ Ընկերութեան ընդհանուր ժողովները վերջին տարիներս ձեռք քաշեցին հիմնադրամ, անշարժ դումարներ կազմելու դիտաւորութիւնից և որոշեցին բոլոր միջոցները գրքերի հրատարակութեան վրա գործ դնել։ Դա շատ խելացի որոշում է. փողը վերածվում է գրքերի, որոնք ոչ միայն տալիս են նոյն տոկոսը, որ պէտք է տային անշարժ դումարները, այլ և իրանց էութեամբ ծառայում են ընկերութեան անմիջական նպատակներին և այդպիսով զարգացնում ու լայնացնում նրա գործունէութիւնը։

Ընկերութեան առաջ այժմ հարթված է գործունէութեան ասպարէզը։ Տոկուն աշխատանքը և եռանդուն վերաբերմունքը անել կը տան այդ ընկերութեանը այնպիսի գեղեցիկ գործեր, որոնց մասին սրանից 10 տարի առաջ երազել անգամ չէր կարելի։

ՆԻՒԹԵՐ ՄԵՐ ԱՐՕՏՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

—

1886 թուականից սկսած պետական կալուածների մինիստրութիւնը հետազօտում է Անդրկովկասի պետական արօտատեղերը, ժողովելով տեղեկութիւններ ոչ միայն այն հողերի մասին, որ կան տաւարապահների ձեռքում, այլ և նրանց տնտեսական վիճակի, և անասնապահական պարապմունքի մանրամասնութիւնների մասին։

Երևանեան նահանգի արօտատեղերը, քիչ բացառութեամբ, արդէն հետազօտված են. Գանձակի նահանգի արօտները չափելու և ուսումնասիրելու համար բաւական է մի երեք տարի. Թիֆլիսի նահանգների արօտների ամբողջ կէսը հետազօտված է։ Բոլոր չը հետազօտված արօտները չափելու և ուսումնասիրելու համար պահանջվում է մօտ վեց-եօթ տարի ժամանակ։

Երբ արօտների ուսումնասիրութիւնը վերջանայ, այն ժամանակ մինիստրութիւնը մտադիր է նրանց վերջնական կազմակերպութեան և հաւասարաչափ բաժանման կամ տնտեսական պայմանների համապատասխան բաշխման ծրագիր մշակել, որպէս զի արօտներից օգտվելու գործը կանոնաւորվի։

Արօտների ուսումնասիրութեան հետևանքները մշակված տպվում են երկրագործութեան մինիստրի Կովկասի լիազօրի ձեռքով «Արօտների ուսումնասիրութեան Նիւթեր» անունով (Матеріалы для устройства лѣтнихъ и зимныхъ пастбищъ)։

Մեր խմբագրութեան մէջ ստացվեց այդ Նիւթերի III հատորը, որ պարունակում է իր մէջ Վերմիշեանի, Գէնովկու, Գլասկօի և Քալանթարի հետազօտութիւնները Կարայազի, Թարսչայի, Աղմանկանի և Արագածի արօտների մասին։

ստիպէին զիրենք շալկել և տանել, և երբ ուժաթափ կընկնէր գետին, կը սկսէին դաւազաններով հարուածել անխնայ. մէկ ամբողջ գիշեր պահեցին կաչկանդուած ձիան կոյտերու մէջ, երեք օր շարունակ, գիշեր և ցերեկ, նօթի և ծարաւ, թոյլ չը տուին քնանալու և ոչ իսկ ծխելու, որին չափազանց մոլի էր։ Ի վերջոյ հրապարակաւ կախաղան բարձրացրին Բաղէշի մէջ 29 փետրվարի 1894-ին։

Համարձում Բոյաճեան (Մուրադ). Հաճինցի (Ադանա). ձերբակալուեցաւ Հարք գիւղի այրի մէջ 23 օգոստ. 1894-ին։ Երեք օր շարունակ արնի տակ թաղեցին, մինչ որ հիւանդացաւ. օգոստոսի 28-ին զինուորները Համբարձումին իր ընկերներով միասին բերին Սէմալ՝ Զէքի փաշայի մօտ։ Այստեղ խիստ կերպով դանակոծուեցան և բանտարկուեցան եկեղեցու մէջ. նոցա թոյլ չէին տար եկեղեցուց դուրս գալ իրանց բնական կարիքը հոգալու, այլ ստիպուած էին տաճարի մէջ իրանց խոնջանները արձակել և պղծել եկեղեցոյ յատակը։ Ամբողջ 2 ամիս Համբարձումի 21 ընկերներով բանտարկված մնաց Մուշի բանտում. մէկ ամսուայ ընթացքում նոցանից 6-ը մեռան, խիստ չարչարանաց հետևանքը. ամենքը չղթայակապ էին։ Բաղէշ ժամանելուց 8 օր յետոյ երկուս ես մեռան։ Իր դատապարտութիւնէն 4 օր յառաջ Համբարձումը խիստ տուայտանաց ենթակայ եղաւ. 24 ժամ շարունակ, անօթի և ծարաւի, ստիպուեցաւ յոտընկայս մնալ։ Սարսափելի կերպով բիրերով կը ծեծէին, մաղերը կը փետէին, 9 հոսայ ծանրութեամբ երկաթեայ չղթաներ ձեռքն անցուցած, ոտնակապերը աւելի ծանր։ Այժմ իսկ նա ենթակայ է մշտական չարչարանաց. չղթաները աւելի ծանրացած են. քիւրդերը կը հրճուին նորան այպանելով և հարուածելով։ Նա այժմ բանտում արտաքնոցները մաքրելու պաշտօն է վարում։

Ն—ս. Մ—դ

II

ՆԱՄԱԿ ԹԻՒՐՔԻԱՑԻՑ

—

Կ. Պոլիս, ապրիլի 19-ին

Սասունէն Պոլիս դեսպանատունները հասած լուրերը կը հաղորդեն, թէ երեք պետութեանց քննիչները կատարեալ համոզում գոյացուցած են. վայրենիներուն ըրած ահռելի ջարդը կատարելապէս ստոյգ է իր բոլոր սարսափելի մանրամասնութիւններուն մէջ։ Պոլիս դեսպանատունները երկու տեղեկագիր պիտի դայ. մէկը հարցաքննութեանց ճիշդ պատկերը, միւսը եւրոպացի քննիչներու տպաւորութիւնները և համոզումները պիտի պարունակեն։ Այժմ քննիչները գիւղերը պիտի երթան. հոս, կառավարութիւնը չուզեր, որ այդ այցելութիւնն ընեն. Անգլիոյ դեսպանը հաղորդեց կառավարութեան, որ երեք դեսպանատունները հրահանգ պիտի տան Սասունի քննիչներուն՝ երթալ Սասունի գիւղերը. Դուռը ինչ կուզէ թող ընէ։

Մայիս 7-ին Լօնդոն գումարուելիք միտինկին մասին հոս մեծ սրտայուզում կը տիրէ։ Այսօր եւրոպական թղթակիցները ընդարձակ գրութիւններ ղրկեցին Լօնդոն, նորանոր հարստահարութեանց մասին։ Ամենէն ուշադրաւն է բանտերու մէջ հայոց վրա գործադրուած միջնադարեան սոսկալի չարչարանքներուն նկարագիրը։ Թղթակիցները կրցած են ամենաճիշդ, ամենաստոյգ աղբիւրներէ մէկիկ-մէկիկ հաւաքել բարբարոսական գործողութեանց տեղեկութիւնները. ամեն ինչ ճիշդ ու որոշ կերպով դրուած են։

Այդ բանտի չարչարանքներէն հաղարէն մէկը յիշեմ։ Վանի բանտին մէջ այս օրերս տանջանքներու ներքև կը մեռնի Պողոս անուն խեղճ հայ մը. աղգականները նահատակին դիակը կը ներկայացնեն անգլիական հիւպատոսին, որ վայրագ եղելութիւնը իր աչքերով տեսնելով՝ ճշմարտութիւնը կը հաղորդէ Պոլիս իր դեսպանատան։ Դեսպանին կողմէն դիմում կը լլայ Մեծ-Եպարքոսին, որ անամօթաբար չը գիտնալ կը ձևացնէ և կըսէ թէ Վան պիտի հեռագրէ և տեղեկութիւն պիտի ուղէ։

Բարեկարգութեանց ծրագրին խնդիրը շատ սրատամաշ երեսոյթ մը առած է։ Այսօր կը լսենք թէ Ռուսիոյ և Ֆրանսայի կառավարութիւնները հաղորդած են իրենց դեսպաններուն, որ այդ ծրագրին իրենց վերջնական հաւանութիւնը տուած են։ Սակայն Անգլիոյ կառավարութեան կողմէն տարբեր հրահանգ եկած է։ Լօնդոնի դահլիճը անբաւական կը գտնէ այդ ծրագիրը։

Թէև մանրամասնութիւնները գաղտնի կը պահուին, բայց ապահով կերևի թէ Հայաստանի մէջ կատարուելիք բարենորոգումները եւրոպական երաշխաւորութեան ներքև պիտի չը դրուին։ Այս պարագան ինքնիրենը կոչնչացնէ ծրագրին ներքին արժանիքը։ Կը յուսանք թէ պատրիարքը այս չարիքին դարմանը գտնելու համար ո և է ջանք պիտի չը խնայէ. մանաւանդ որ եւրոպական պետութիւնները շատ մը փաստերով պիտի համոզուին, որ եթէ իրենց երաշխաւորութիւնը զլանան մեղի, խնդիրը պիտի գտնուի այն վիճակին մէջ, ուր որ էր Սասունի ջարդէն առաջ։ Ուստի և հայ ժողովուրդն ալ դոհ մնալով՝ ալ բոլորովին զինաթափ ըլլալու պատճառ մը չունի։

Եւրոպական թերթերէն շատերը ծանուցին թէ «Պէլ-Մէլ-Կազէթի» խմբագիր Պ. Քըրսթ, որուն Պոլիս գալուն լուրը հաղորդած էի ձեզ, Հայաստան ուղևորութիւն մը պիտի ընէ. Անգլիոյ դեսպանը չը թոյլատրեց, որ այս խորհուրդը իրագործուի. յայտարարեց թէ կամ պէտք է, որ ուրիշ թերթերու թղթակիցներն ալ արտօնուին Հայաստանի մէջ ազատ մուտք ունենալ և ուղևորութիւն ընել, կամ թէ Թիւրքին նպաստաւոր մարդ մըն ալ պէտք չէ, որ հոն երթայ ազատորէն։

Պոլսոյ ֆրանսերէն թերթերը ատենէ մը ի վեր շատ կը հետաքրքրուէին հայոց վերաբերեալ լուրերովը. ամեն լուրեր, որոնք ինքնին ո և է վնասակար նշանակութիւն չունին, օրինակի համար, ժողովներու գումարում, պատրիարքական այցելութիւն և այլն. կառավարութիւնը արգելեց այս տեսակ լուրերու հրատարակութիւնն իսկ, որպէս զի Պոլսոյ եւրոպական գաղթականութիւնը առիթ չունենայ ամեն օր հայերը յիշելու։

«Մուրճի» արդարացումը։ Ձեր ամսագիրը թիւրք կառավարութիւնը կործանելու համար չը հրատարակուեր։ Այսպէս վճռեց Պոլսոյ պատժական ատեանը այս շաբաթ։ Պ. Սմբատ Դաւիթեան, որ ութը ամիսէ ի վեր բանտարկուած կը մնար, մասնաւորապէս այն ամբաստանութեամբ թէ «Մուրճ» ամսաթերթին մէկ ստացագիրն ունի քովը, անպարտ արձակուեցաւ։ Դատարանը թէև շատ փափաք ուներ այս երիտասարդը դատապարտելու, բայց «Մուրճին» մէկ թիւը, որ աչքի առջև ունէին, հոս դարձուցին, հոն դարձուցին, վերջապէս տեսան, որ այնպիսի թերթ մըն է, որ իր բոլոր ծանրութեամբը հանդերձ տէրութեան մը մահ պատճառելու չափ վտանգաւոր չէ։

***

Մի առանձին յօդուածով մենք կը ծանօթացնենք մեր ընթերցողներին Արագածի արօտների ուսումնասիրութեան հետ, որ կարող է լոյս սփռել այն ծանր վիճակի վրա, որի մէջ գտնվում է Էջմիածնի և Ալէքսանդրօպոլի հայ գիւղացին՝ արօտների վերաբերութեամբ։

Պէտք է նկատել, որ այդ տեղերի լեռնաբնակ ժողովուրդը չէ կարող բաւականանալ միայն վարելահողերով, այլ կարօտ է նոյնպէս արօտների, որպէս զի կարողանայ պահել բաւականաչափ տաւար և նրանից ստացած արդիւնքով լրացնել իր տարեկան եկամուտների մի նշանաւոր մասը։

ՄԱՂԻՆԻՆ ԹԻՖԼԻՍՈՒՄ

—

Հռչակաւոր երգիչ Մաղինին երգեց չորեքշաբթի, ամսիս 26-ին և հինգշաբթի, ամսիս 27-ին։ Կալուածական բանկի թատրոնը լի էր, նոյն իսկ բոլոր միջանցքները լի էին հետաքրքիր հանդիսականներով, որոնք եկել էին հռչակաւոր երգչին լսելու։

Մաղինին սկսում է իր երգեցողութիւնը շատ հասարակ, կարծես սառն, անսիրտ. հասարակութիւնը հեռանում է նրա ձայնին, իւրաքանչիւր նոտային, չանկանում է ամենահասարակ հնչիւնի մէջ տեսնել, թէ ինչով է նա այնքան հռչակ ստացել և կարծես թէ անբաւական է։ Բայց ահա երգը ամբողջացաւ, ստացաւ գոյն, բովանդակութիւն, դիւթիչ դայլայլիկներ և ելևէջները զարդարեցին նրան, և երգը թափանցեց լսողների սիրտը։ Դահլիճը դղրդում է, հասարակութիւնը պահանջում է կրկնել...

Այն մեծ տեխնիկը, այն մեծ հմտութիւնը, որ ունի Մաղինին, զարգացած ճաշակի հետ միասին, անմոռանալի են անում նրա Spirito gentil-ը, «Մարգարիտ որոնողներից» և Cavaleria Rusticana-ից երգած կտորները։

Մաղինին արդէն հասակով մարդ է, բայց ձայնի մէջ մնայել է դեռ թարմութիւն, երիտասարդական աշխոյժ։ Մաղինիի ձայնը ուժեղ, յաղթական, դղրդացնող ձայներից չէ. նա փոքր, բայց քնքոյշ, մեղմ, ջերմութիւն և փայփայանք պարունակող է։ Նա գիտէ իր պիանիսիմօյով, իր մեղմ հնչիւններով հիացնել հանդիսականին։

Բայց հասարակութիւնը մնում է չը բաւականացած. նա ցանկանում է, որ երգը շարունակվէր և դառնար օպերային մի մեծ կտոր, որպէս զի հռչակաւոր երգչի թողած տպաւորութիւնը ամբողջանար։

Հասարակութիւնը առաջին բաժանմունքներում իրան հանդիստ էր պահում, բայց երկրորդ բաժանմունքներում, թէ առաջին և թէ երկրորդ երեկոյեան, աղմկալից ցոյցեր արեց երգչին։

Ընծաներ տրվեցին՝ ծաղիկներ, պսակներ և արծաթեայ մի կուժ իր պարագաներով։

Այսօր, շաբաթ, Մաղինիի վերջին կօնցերտն է արքունական թատրոնում։

ՆԱՄԱԿ ԲԱԳՈՒԻՑ

—

Ապրիլի 24-ին

Երէկ, ամսիս 23-ին, կայացաւ Հռիփսիմեան օրիորդաց դպրոցի 1894 թ-ի տարեկան ակտը։ Նախօրէն յայտարարված լինելով տեղական լրագրում, ժողովվել էր հանդիսականների մի ահագին բազմութիւն. նորակառոյց դպրոցի հսկայական դահլիճում ոչ միայն նստելու, այլ և կանգնելու տեղ չէր մնացել։ Իրանց ներկայութեամբ պատուել էին հանդէսը նաև նահանգապետը իր օգնականով, քաղաքագլուխը և ոստիկանապետը։

Հանդէսը բացեց թեմական տեսուչ Գեղամեան քահանան, ապա ընդունված եղանակով միմնանց յաջորդել սկսեցին սովորական երգերն ու ոտանաւորները, մոռացութեան չէր տուած և պարգևաբաշխութիւնը և պարգևներ տրվում էին աւարտողներին անխտիր՝ իրանց աւարտման վկայականներով հանդերձ։

Դպրոցի ուսումնական մասի հաշուետուութիւնից մենք ամփոփ գաղափար, տարաբաղդաբար, չը կարողացանք կազմել ուսումնարանի առաջադիմութեան մասին։ Աւագ ուսուցչի տուած տեղեկութիւններից այսքանը միայն կարելի եղաւ հասկանալ, որ դպրոցը, իր մի քանի բաժանմունքներով ունի 315 աշակերտուհի, որ տարվայ ընթացքում մանկավարժական 11 խորհուրդ է տեղի ունեցել (կէսը աւել է), որ ուսուցիչները իրանց պարտականութիւնից դուրս դաստիարակչական պաշտօն են ստանձնել և աշակերտների հետ, արտաքոյ դասերի, ընթերցանութեամբ պարապել, որ թոշակադրամը տարեկան 16 ռուբլի է և 167 աշակերտուհի ձրի են սովորում, և այլ մի շարք այսպիսի տեղեկութիւններ և չը յիշատակելու արժանի դէպքեր...

Հանդէսը կազում էր երգեցողութեան կողմից. ոչ ներդաշնակութիւն երգածների մէջ, և ոչ ճաշակ։ Այլապէս չէր էլ կարող լինել, քանի որ երգեցողութիւնը յանձնված է մի զառամեալ տիրացուի քմահաճութեան։

Ուսումնական մասի հաշուետուութիւնից յետոյ տեղի ունեցաւ և տնտեսականի հաշուետուութիւնը։

Հանդիսի վերջում վաճառվեցին աշակերտուհիների ի ցոյց դրած ձեռագործները, որոնք հոյակապ և ընդարձակ դահլիճի ճակատի անկիւններում հաղիւ նշմարելի էին։

Հանդիսականները ուսումնարանի օգուտը աչքի առաջ ունենալով՝ առանց խստապահանջ լինելու, իսկոյն և եթ գնեցին համարեա բոլոր ձեռագործները։ Մի ձեռագործ էլ տողերիս գրողին վիճակվեց։ Այդ ձեռագործը ուշադրութեան արժանի մի բարձի երես է՝ ագռաւ ու աղուէս ասեղնագործով, սակայն ամենից առաջ աչքի է ընկնում ոչ թէ ինքը ձեռագործը, այլ աղուէս բառը, որ ասեղնագործած է «ե»-ով (աղուես)։

Եթէ աշակերտուհիները ձեռագործի վարժուհու անմիջական հսկողութեան տակ, նոյն իսկ ամբողջ ժամերով բառեր ասեղնագործելիս սխալներ են անում, հապա ինչ սխալներ պիտի անեն նոյն աշակերտուհիները հասարակ թելադրութիւն կամ նամակ գրելիս...

Ն. Դ.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Հինգշաբթի, ապրիլի 27-ին, Ներին Կայսերական Բարձրութիւն Թագաժառանգ Ցէսարեվիչ և Մեծ Իշխան Գիւորգի Ալէքսանդրովիչի ծննդեան օրը քաղաքը վաղ առաւօտից զարդարված էր դրօշակներով։ Այդ առիթով, մեծ հանդէսով պատարագ մատուցեց և ապա մաղթանք կատարեց Վրաստանի էկզարխը ուղղափառ ամբողջ հոգեւորականութեան հետ միասին։ Մաղթանքին ներկայ էին՝ կառավարչապետի օգնական կոմս Տաուիշչեվ, Թիֆլիսի նահանգապետը, բազմաթիւ գեներալներ և հասարակութեան մեծ բազմութիւն։ Հայոց Վանքի մայր-եկեղեցում պատարագ եղաւ, որից յետոյ Թիֆլիսի թեմի առաջնորդը հայ հոգևորականութեան հետ միասին մաղթանք կատարեց։ Մաղթանքին ներկայ էին հայոց դրպրոցների աշակերտները։ Մաղթանքներ կատարվեցին կաթոլիկ և բողոքական եկեղեցիներում, մզկիթներում և հրէական սինագոգաներում։

—

Հինգշաբթի երեկոյեան, ապրիլի 27-ին, ստացանք հետևեալ հեռագիրը Կարաուրգանից (Կարսի նահանգ, մեր և Թիւրքաց սահմանագլուխ)։ «Թիւրքերը արգելեցին անգլիական թղթակից Դիլօնին, որ վերադառնում էր Թիւրքաց Հայաստանից դէպի Կովկաս, անցնելու սահմանը, այն պատրուակով, որ անցագիրը կարգին չէ։ Դիլօն ստիպված վերադառնում է Էրզրում։ Այդ մասին հեռագրված է Լօնդօն»։

—

Թիւրքաց կառավարութեան յանդգնութիւնը սահման չունի. բաւական չէ, որ թոյլ չէ տալիս եւրոպացի թղթակիցներին մտնել իր սահմանները, այլ նոյն իսկ, եթէ մէկին աջողվում է մտնել այդ երկիրը, թոյլ չէ տալիս, որ նա այդ տեղից դուրս գայ։ Ոչ անցագիրը, ոչ վկայականը, ոչ օրինական ապացոյցները ոչինչ գին չունեն Թիւրք փաշաների աչքում, և նրանք անպատիժ խաղում են նոյն իսկ օտար հպատակների հետ այնպէս, ինչպէս իրանց հարեմի ներքինիների հետ։

—

Երէկ, մենք ստացանք Վիէննայից, ապրիլի 28-ից, հետևեալ հեռագիրը. «Լօնդօնի լրագիրները յայտարարում են, թէ պետութիւնները պարտաւոր են, առանց յետաձգելու, միջամտել հայոց հարցում.—«Daily News» լրագիրը, բազմախորհուրդ լեղու գործածելով՝ ասում է, թէ պէտք է պահանջել Ֆրանսիայից և Ռուսաստանից, որ Անգլիայի հետ համերաշխութեամբ քննութեան ենթարկեն եղած անցքերը և մինչև անգամ յետ կանչել դեսպաններին, եթէ միւս պետութիւնները չեն համաձայնվի այդ բանին։ Անհամաձայնութեան դէպքում Անգլիան պէտք է առանձնակի գործի»։

—

Մայիսի 7-ին Լօնդօնում կայացած միտինգի մասին Հիւսիսային գործակալութիւնը «Кавказъ» լրագրին հեռագրում է հետևեալը. «Սէն-Ջէմս-Հոլլում, Արգայլեան դքսի նախագահութեամբ տեղի ունեցաւ միտինգ հայկական գաղանութիւնների դէմ բողոքելու նպատակով։ Գլադստոնի նամակը, կարդացվելով այդ միտինգում, հաւանութեան ազմկալի նշաններ առաջացրեց։ Հռետորների թւում կային՝ Հէրֆորտ եպիսկոպոսը, Լիվերպուլի և Էդինբուրգի լորդմէրները և ուրիշները»։

—

Մենք ստացաք մի քանի նամակներ Աստրախանից, որոնք մեծ համակրանքով են խօսում այդ թեմի նոր կառավարիչ Խորէն եպիսկոպոս Սահակեանի առաջին քայլերի մասին։ Այդ երևոյթը մեզ անչափ ուրախացնում է։ Թող այդ ժողովրդական համակրանքը լինի այն պատուանդանը, որի վրա յենված՝ Խորէն եպիսկոպոսը սկսի իր լուսաւոր գործունէութիւնը թեմի համար, ուր թէ դպրոցները, թէ եկեղեցիները և թէ եկեղեցական-վարչական գործերը կարօտ են մի ուժեղ ղարկի, քանի որ տարիների ընթացքում շատ յետ են մնացել։

—

Մեզ հաղորդում են հետևեալ տեղեկութիւնը. «Հին-Բայազէտի կողմերում մահմեդականների դիրքը դէպի հայերը սարսափելի սպառնական է։ Նօվրուզի օրը ընդհանուր խորհուրդ է կայացել Թիւրքերի մէջ՝ կոտորել հայերին. այս բանին արդելք են եղել Իսմայիլ-բէգ հարիւրապետը և Համիդէի հազարապետ Շէյխ-Օզմանի որդի Շէյխ-Սալահբէգը։ Սակայն սրանով խնդիրը չէ վերջացել. Թիւրքերը մի ինչին առիթի են սպասում ընդհանուր կոտորած առաջ բերելու համար։ Ալաշկերտի քիւրդերը սարսափում են հայերի մօտալուտ ազատութեան մասին տարածված լուրերով. նրանք պատրաստվում են թողնել, հեռանալ և իրանց համար նոր հայրենիք գտնել, եթէ լուրերը ճշդվեն»։

—

Կիրակի, մայիսի 30-ին, Թիֆլիսի նահանգական դատարանի դահլիճում լինելու է Կովկասեան իրաւագիտական ընկերութեան հերթական նիստը, որ պիտի զբաղվի հետևեալ հարցերով. 1) Վարչական հարցեր. 2) Ընկերութեան նախագահ Բիկովի առաջարկութիւնը պետական խորհրդի անդամների՝ Ստարիցկու և Նարօկովի ծառայութեան 50-ամեակը տօնելու մասին. 3) Ընկերութեան անդամ պ. Կրասովսկու զեկուցումը հետևեալ նիւթի մասին «Дискреціонная власть суда по проекту уложенія»։ Այս նիստին ներկայ է լինելու սենատոր Կօնի, որ, ինչպէս յայտնի է, դատաստանական գործերի քննիչի պաշտօնով է եկած Թիֆլիս։

—

Ապրիլի 27-ին, ռուսաց դրամատիական խումբը երրորդ անգամ կրկնեց «Madame sans gêne» կոմէդիան։ Վատ եղանակին միայն պէտք է վերագրել այն հանգամանքը, որ թատրոնը լի չէր, քանի որ անկարելի է երևակայել, որ այդ հետաքրքրական պիէսը չէ դրաւում մեր հասարակութիւնը։ Նոյն պիէսը պէտք է կրկնվի չորրորդ անգամ, վաղը, կիրակի օր, ապրիլի 30-ին։ Խորհուրդ ենք տալիս տեսնել այդ պիէսը։

—

Օդեսայի «Одесскія Новости» լրագրի մէջ տպագրված է հանգուցեալ Պողոս Իզմայլեանի փոքրիկ կենսագրութիւնը, պատկերի հետ միասին.—բայց այդ պատկերը այնքան նման է հանգուցեալ քաղաքագլխին, որքան և ամեն մի մարդու։ Առհասարակ Օդէսայի լրագրի պատկերները շատ են յիշեցնում երանելի Իրանի աննման նկարիչներին...

—

Մեր խմբագրութեան մէջ ստացվեց նոր լոյս տեսած մի գրքոյկ, «Ուրբինոյեցի մանուկը» վերնագրով։ Դա Ուդի հեքիաթներից մէկն է, որ հրատարակել է Հրատարակչական ընկերութիւնը։ Թարգմանչի անունը յայտնված չէ։ Գինն է 10 կոպէկ։

—

ԵՐԵՒԱՆԻ գաւառի Ղամարլու գիւղից մեզ գրում են. «Ապրիլի 14-ին, ճաշից յետոյ, ժամը մօտ 3-ին սաստիկ կարկուտ եկաւ, որից վնասվեցին զգալի կերպով թէ ծառերը և թէ խաղողի մատները։ Ի նկատի պէտք է ունենալ, որ մատները մի 2 շաբաթ առաջ ցրտից ևս վնասվել էին. եղանակը փոփոխական է, անձրևներ են գալիս. գրեթէ ամեն օր վտանգ կայ, որ սաստիկ անձրևներից ցորենը ևս կարող է վնասվել։»

—

ԴԻԼԻՋԱՆԻՑ մեզ գրում են. «Մի քանի օր է, ինչ այստեղի քահանան ժողովրդի մէջ շրջեցնում է նուիրատուութեան մի թերթ, որը ստացված է Թիֆլիսի կօնսիստորիայից, որով դիմում է «բարեպաշտ ազգայնոց աջակցութեանը», յօգուտ մի ինչ որ ընծայարան կոչվող հիմնարկութեան։ Սակայն անաջող. մարդիկ կասկածանքով են վերաբերվում, կամ, ճիշդն ասած՝ չեն համակրում և չեն ստորագրում։ Եւ իրաւունք ունեն. միթէ ժողովուրդը իրան վզին տգէտ քահանաներ փաթաթելու համար էլ պարտական է փող տալու. առանց այդ էլ քահանայանալ ցանկացող տիրացուների թիւը այնքան շատ է, որ եթէ ձեռնադրելու համար մի որոշ տուրք նշանակվի՝ նիւթական օգուտի մի անսպասելի աղբիւր կը կազմի։»

—

ԲԱԳՈՒԻՑ մեզ գրում են. «Երէկ, ամսիս 23-ին, սիրողները, դերասան Աւալեանցի մասնակցութեամբ, բարեգործական նպատակով խաղացին Սունդուկեանցի «Բանդած օձախ» պիէսան, որը անցաւ գոհացուցիչ կերպով։ Թատրոնը համարեա թէ լի էր։ Պէտք է ասած, որ մեր հասարակութիւնը աւելի սիրով յաճախում է սիրողների ներկայացման, քան թէ դերասաններինը։ Այս երրորդ, թէ չորրորդ անգամն է, որ սիրողները այս տարի ներկայացում են տալիս, և ամեն անգամ էլ բևմ են դուրս գալիս նոր սիրողներ։ Երէկվայ ներկայացման հինգ նոր սիրողներ էին մասնակցում, երկու տիկին և երեք օրիորդ, որոնք բաւական աջողութեամբ կատարեցին իրանց ստանձնած դերերը։ Հողը արդէն պատրաստ է. կան բաւականաչափ սիրողներ, այնպէս որ կարելի է լուրջ ընտրութեամբ մի շնորքով սիրողների խումբ կազմակերպել և պարբերաբար ներկայացումներ տալ ամենամատչելի գներով։ Գործին շատ կը նպաստէ նաև Մարդասիրական ընկերութեան նոր շինութեան ընդարձակ դահլիճը իր ծրագրած հիմնական բեմով։ Պակասում է մի քանի անձերից բաղկացած մի մասնաժողով միայն, որ վարչական մասը հոգայ և ղեկավարէ. իսկ այդ դժուար չէ կազմակերպել Բագուի նման ինտելիգէնտներով հարուստ մի քաղաքում։»

—

ԵԿԱՏԵՐԻՆՕԴԱՐԻՑ մեզ գրում են, ապրիլի 18-ից. «Երեք շաբաթից աւելի է, որ դերասան Աբելեան իր փոքրիկ խմբով գտնվում է մեզ մօտ։ Այդ երեք շաբաթվայ միջոցում նա տուեց մի շարք ներկայացումներ, որոնք ընդհանրապէս լաւ տպաւորութիւն թողեցին։ Ամսիս 16-ին Աբելեանի բենէֆիսին ներկայացրին «Ոճրագործի ընտանիքը»։ Կօրրազոյի պատասխանատու դերը բենէֆիցիանտը կատարեց շատ խելացի կերպով և ազդեց հանդիսականների վրա։ Այդ երեկոյեան Աբելեանը ստացաւ երկու պսակ և մի ծրար փոքրիկ զումարով»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՌՈՒՍԱՍՏԱՆԸ ԵՒ ԵԱՊՕՆԻԱՆ

—

Արտասահմանեան լրագիրները առանձին ուշադրութիւն են դարձնում այն խիստ լեզուի վրա, որով գրված է վերջին թղթակցութիւնը Պետերբուրգից Վիէննայի կիսապաշտօնական «Politische Correspondenz» լրագրում։

«Դիպլօմատիական այն յայտագիրը, ասում է թղթակիցը,—որի մէջ հաղորդվեց եապօնական կառավարութեանը Ռուսաստանի պահանջները, շատ կտրական և խիստ լեզուով էր գրված և, ինչպէս երևում է ճիշդ աղբիւրներից ստացված տեղեկութիւններից, ոչ պակաս կտրական և խիստ բնաւորութիւն ունէր ռուսաց արտաքին գործերի մինիստր իշխան Լոբանով-Ռոստովսկու վերջին խօսակցութիւնը Պետերբուրգի եապօնական դեսպանի հետ։ Մինիստրը յայտնեց Եապօնիայի ներկայացուցչին, որ ի նկատի առնելով աղգային շահերը, որ չոշափում է Սիմօնոսէկի դաշնագիրը, Ռուսաստանը չէ կարող ուշադրութեան առնել

եպիսկոպական կառավարութեան այն երկիւղը, թէ Եպիսկոպիայում կարող է ապստամբութիւն ծագել, եթէ որ եպիսկոպական մինիստրութիւնը կը կատարի Ռուսաստանի, Ֆրանսիայի և Գերմանիայի պահանջները՝ Սիմոնոսեկի դաշնագիրը փոփոխելու վերաբերմամբ։

Բացի դրանից, ռուսաց զինուորական վարչութիւնը շարունակում է եռանդոտ միջոցներ ձեռք առնել, որպէս զի չոչափելի կերպով կարողանայ պաշտպանել իր ներկայացրած բողոքը այն դէպքում, եթէ որ նա ուշադրութեան չառնվի, որը այստեղ անհաւատալի է երևում։ Պետերբուրգում, ընդհակառակն, յոյս են տածում, որ գործը խաղաղութեամբ կը վերջանայ, բայց, յամենայն դէպս, հարկաւոր բոլոր պատրաստութիւնները տեսնվում են։

ՆԱՄԱԿ ԹԻՒՐԻԱՑԻՑ

—

Կ. Պոլիս, ապրիլի 19-ին

Ամսիս 18-ին, երկուշաբթի գիշեր, հրդեհ մը մոխիր դարձուց Սամաթիա հայաբնակ թաղին մէջ երկու հարիւր եօթը տուն։

Հրդեհը սկսաւ ժամը 5—4-ին։ Արևմտեան հիւսիսային սաստիկ հովը անմիջապէս տարածեց զայն երեք ուղղութեամբ։ Բոլոր տունները, փայտաշէն ու խիտ առ խիտ, անմիջապէս կը բռնկէին ու մոխիր կը դառնային։

Հրշէջ-զինուորներու խումբերը հասան և անոնց ջանքերով է որ հրդեհը արգիլուեցաւ Գոճա-Մուսթաֆա-փաշա թաղին անցնելէ։ Հարկ եղաւ մէկ քանի տուն փլցնել։ Հրդեհէն քիչ եաքը սաստիկ անձրև մը սկսաւ տեղալ, որ գոնէ տուներուն վրա ինկող կայծերը մարելու օգուտը ունեցաւ։

Այրած թաղը ամբողջովին հայաբնակ էր, ու բնակող հայերն ալ ամբողջովին աղքատ էին։ Սամաթիոյ ամենէն կարօտ դասերը կը բնակէին հոն, օրէ վաստկող օրէ ուտող մանր խանութպաններ, նաւավարներ, կօշկակարներ, մանրավաճառներ և այլն։ Այրած են 187 հատ փայտաշէն տուն, 8 հատ խանութ, 15-ի չափ քարուկիր տուն։ Հերկիղեալ ընտանիքներուն թիւը 300-ի կը հասնի։ Իրաքանչիւր ընտանիք հաշուեցէք հինգ հոգի, և կունենանք առնուազն 1500 հոգի, որոնք հիմակ չեն գիտեր թէ ուր պիտի դնեն գլուխնին։ Այդ երկու հարիւրէ աւելի շէնքերուն հարիւ 7—8-ը ապահովագրուած էին։

Երէկ առտուընէ իսկ թաղին մէջ յանձնախումբ մը կազմուեցաւ՝ հրկիզեալներուն օգնութեան հասնելու համար։

Առաջին գործն էր տեղաւորել հրկիզեալները, որպէս զի գիշերը բացօդեայ չը մնան։ Եւ յանձնախմբի անդամները փողոցէ փողոց պտտելով՝ մինչև ցորեկ յաջողեցան պարապ տուներու և պարապ սենեակներու մէջ զետեղելու հրկիզեալները։

Իրենց համար ու ամբողջ թաղեցիներուն համար մեծագոյն մխիթարանքը եղաւ հայոց պատրիարքի այցելութիւնը Սամաթիա, հրդեհին վայրը, —տխուր մոխրակոյտ, ուր տեղ-տեղ ծխնելոյզներ միայն կանգուն մնացած են։

Պ—ի

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Նորերս, անգլիական համայնքների ժողովի մէջ, երբ քննվում էր կանանցը ձայնի իրաւունք տալու օրինագիծը պարլամենտական ընտրութիւնների ժամանակ, վերնատանը նստած տիկինները աղմկալի ցոյց արին, որից յետոյ մի սարսափելի իրարանցում սկսվեց։ Այդ սկանդալի հեղինակ տիկիններին դուրս բերին համայնքների ժողովի շինութիւնից։ Հետեւեալ օրը կանանց քաղաքական կլուբներում քննվում էր նոր արշաւանք սկսելու ծրագիրը։

—Մայիսի 1-ի տօնախմբութիւնը Բերլինում, Պարիզում, Միլանում և ուրիշ քաղաքներում հանդիստ անցաւ։ Միայն Պէշտում, կարմիր դրօշակներ բռնելու համար, ոստիկանութեան և բանւորների մէջ ընդհարում տեղի ունեցաւ։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 27 ապրիլի։ Զորեքշաբթի տեղի ունէր երկրորդ Բարձրագոյն զօրահանդէսը։ Թագաւոր Կայսրը և Թագուհի Կայսրուհին վերադարձան Ցարսկոյ-Սելօ։

ԱԼԺԻՐ, 26 ապրիլի։ Թագաժառանգ ցէսարէվիչ «Полярная Звѣзда» նաւով ուղեւորվեց Պիրէյ։

ՊԱՐԻԶ, 26 ապրիլի։ Լրագիրները լուր են հաղորդում, որ իբր թէ Ֆրանսիան մտադրութիւն ունի առանձին բանակցութիւն սկսել Եպիսկոպիայի հետ և պահանջել, որպէս զի եպիսկոպական զօրքերի թիւը Ֆորմոզում և Պէսկադորեան կղզիների վրա սահմանափակ լինի։

ԼՕՆԴՕՆ, 21 ապրիլի։ «Times» կարծում է, որ Լիսաբոնեան թերակղզուց հրաժարվելու համար Եպիսկոպիան պէտք է ստանայ 10 միլիոն ֆունտ ստերլինգ։

ԼՕՆԴՕՆ, 27 ապրիլի։ Համայնքների ժողովը 222 ձայներով 208-ի դէմ, երկրորդ ընթերցանութեան ժամանակ ընդունեց իրլանդական այն ֆէրմէրներին գաղթեցնելու վերաբերեալ օրէնքը վերացնելու բիլը, որոնք հողավարձ չեն տալիս։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ

Հրատարակիչ՝ Մ. ՄԷԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՐՔՈՒՆԱԿԱՆ ԹԱՏՐՕՆ
Այսօր, շաբաթ, ապրիլի 29-ին
ԵՐԿՐՈՐԴ և ՎԵՐՋԻՆ
ԿՕՆՑԷՐՏ
Աշխարհումս միակ հռչակաւոր տէնօր
ԱՆԺԷԼՕ ՄԱԶԻՆԻԻ
Սկիզբը 8½ ժամին երեկոյեան։
Տոմսակները կարելի է ստանալ Բ. ՄԻՐԻՄԱՆԵԱՆԻ երաժշտական մագազինում, Դվօրցովայա փողոցի վրա։
1—1

ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ սրանով յայտնում է ընդհանուրի տեղեկութեան համար, որ Թիֆլիս քաղաքում, համաձայն ՉԻԵՐԻ ՑՈՒՑԱՀԱՆԴԷՍՆԵՐԻ ՄԱՍԻՆ կանոնադրութեան, որ հաստատել է Կովկասի քաղաքացիական մասի պ. կառավարչապետը, բացվում է ձիերի ցուցահանդէս, որը կը շարունակվի 1895 թուի մայիսի 5-ից, մինչև նոյն մայիսի 18-ը։
Ի նկատի առնելով այդ, Քաղաքային Վարչութիւնը խոնարհաբար խնդրում է գաւառների իշխանաւոր անձերից, և հասարակական, քաղաքային և դասակարգային հիմնարկութիւնների ներկայացուցիչներից՝ տեղեկացնել ազգաբնակութեանը ձիերի ցուցահանդէս բանալու ժամանակի մասին և դրանով նպաստել այդ նոր սկզբնաւորութեան պատւաստմանը, որը պէտք է բարձրացնի ձիաբուծութեան գործը երկրում։
(№ 47) 1—3

Պատիւ ունեմ ծանուցանելու, որ սոյն ապրիլ ամսվայ 25-ից իմ քաթանեղէնի խանութից հեռացրել եմ իմ գործակատարներ ՏԻԳՐԱՆ ԴԱՒԹԵԱՆՑԻՆ և ԱԼԷՔՍԱՆԴՐ ԽԱՉԱՏՐԵԱՆՑԻՆ։
Թիֆլիսի առաջին կարգի վաճառական՝ Գրիգոր Յակովբեան ԲԱՑԵԱՆԴՈՒՐԵԱՆՑ։
1—1

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՒՀԵԱՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԿԱՐ ՈՒ ՉԵԻԻ ԴՊՐՈՑՈՒՄ, Գանովսկայա փողոց № 25, նշանակված է երեխայոց զգեստների վաճառումն՝ ամսիս 27-ին, հինգշաբթի, 28-ին ուրբաթ, 29-ին շաբաթ և 30-ին կիրակի, ժամը 10—3։
(№ 47) 2—2

ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆՈՒ
ԹԻՒՐՔԱՑ ՀԱՅԵՐԻ
ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՐՈՒԹԻՒՆԸ
ԳԻՆԸ 20 ԿՈՊԵԿ
Թիֆլիսում վաճառվում է «Մշակի» խմբագրատանը, նոյնպէս և Դվօրցովայա փողոցի վրա հեռեւեալ խանութներում՝ Եփրեմ Ծատուրեանի լամպաների մագազինում և Տէր-Յովսէփեանի ծխախոտի խանութում։
(№ 144)

ՀԷՄԵՑԿԱՅԱ ԳՈՍՏԻՆՆԻՑԱ
HOTEL NIEMIECKI, «ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՀԻՒՐԱՆՈՑ» գտնվում է ՎԱՐՇԱՎԱՅՈՒՄ, քաղաքի կենտրօնում, նորից վերաշինված, ունի 90 կահաւորված նօմէրներ, որոնց սարը ու կարգը ամենալաւ արտասահմանեան հիւրանոցների սենեակներին է նման։ Նօմէրների գինը 50 կոպէկից մինչև 3 ռուբլի օրական, անկողնով և ծառայով։ Հիւրանոցում կայ ընթերցարան-գրադարան, որտեղ ստացվում են հայերէն «Մշակ» և «Նոր-Դար» լրագիրները, հիւրերի համար անվարձ։ Կայ ռէստօրան, տելեֆօն, քաղցրեղէնների խանութ, լրագիրներ։
Հիւրանոցի մէջ գտնվում են բոլոր երկաթուղային կայարաններում։
(№ 21) 128—130 (2·)

ՀԱՇՈՒԵԿՇԻՌ ԹԻՖԼԻՍԻ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԲԱՆԿԻ

31-ն Ապրիլի 1895

ՊԱՀԱՆՋՔ	Թիֆլիսում	Բագուի և Բաթումի բաժն.	Նդամենը
1. Դրամարկղ (առձեռն թղթադրամ)	235,030—78	75,376—57	310,407—35
2. Ընթացիկ հաշիւ Պետական Բանկ. բաժնում.	597,009—20	280,100 —	877,109—20
3. Զեղչ. (Disconto) մուրհ. երկու ստորագրութ.	3,143,072—03	1,023,483—84	4,166,555—87
4. Զեղչ. մուրհ. մի ստոր. ապահ. տոկոս. թղթ.	156,915—92	— —	156,915—92
5. Զեղչումն տոկոսաբեր թղթ., կտրօն. և այլն.	55,094—49	3,540—55	58,635—04
6. Փոխառութիւն գրաւականով՝			
ա) Պետութիւնից ապահ. տոկոսաբ. թղթերի.	1,561,428—71	576,921—40	2,138,350—71
բ) » ոչ ապահ. » »	227,246 —	7,665 —	234,911 —
գ) ապրանքների	7,951 —	577,788—06	585,739—06
դ) Ոսկւոյ և արծաթի	— —	25,851—33	25,851—33
7. Բանկի պատկանեալ տոկոսաբեր թղթեր.	615,023—95	74,138—79	689,162—74
8. Ոսկի և արտասահմանի փոխանակագրեր.	244,333—71	84,693—11	329,026—82
9. Տոկոսաբեր թղթեր պահեստի դրամագլխի	236,196—12	— —	236,196—12
10. Թղթակիցներ՝			
ա) Նոցա հաշիւը (Loro)	3,920,942—27	— —	3,920,942—27
բ) Բանկի հաշիւը (Nostro)	6,812,964—60	— —	6,812,964—60
11. Բաժինների հաշիւը կենտր. վարչ. հետ	692,894—92	— —	692,894—92
Կենտրօնական վարչութեան հաշիւը բաժինների հետ	— —	894,488—57	894,488—57
12. Գնումն և վաճառ. արժեթղթ ըստ յանձնար.	117,300 —	— —	117,300 —
13. Պայմանաժամն անցուցած փոխառութիւն.	25,925 —	15,190 —	41,115 —
14. Բողոքված մուրհակներ	3,275 —	1,000 —	4,275 —
15. Ընթացիկ ծախսեր	18,908—40	12,761—53	31,669—93
16. Կահկարասիք և սկզբնական ծախսեր	3,081—56	2,816—96	5898—52
17. Յետ ստացուելիք ծախսեր	12,256—25	15,069—61	27,325—86
18. Անշարժ կալուածք	— —	49,195—15	49,195—15
Ր. Ա.	18,686,849—91	3,720,080—47	22,406,930—38

ՊԱՐՏՔ	Թիֆլիսում	Բագուի և Բաթումի բաժն.	Ընդամենը
1. Հիմնական դրամագլուխ	1,000,000 —	— —	1,000,000 —
2. Պահեստի դրամագլուխ	236,232—23	— —	236,232—23
3. Դրամագլուխ զեղչման անշարժ կալուածքի.	— —	1,229—88	1,229—88
4. Դրամական աւանդներ՝			
ա) Պայմանաժամով	4,000,168 —	814,169 —	4,814,337 —
բ) ց'Պահանջ	258,580 —	103,294 —	361,874 —
գ) Ընթացիկ հաշուով հասարակ.	1,313,908—17	1,555,252 89	2,869,161 06
դ) » » պայմանաւոր.	— —	358,797 92	358,797—92
5. Մասնաւոր հաշիւ պետ. բանկայի Թիֆլ. բաժն. ապահովված մուրհակներով	— —	50,000 —	50,000 —
6. Վերազեղչումն մուրհակների պետական բանկի Թիֆլիսի բաժնի	— —	— —	— —
7. Թղթակիցներ՝			
ա) Նոցա հաշիւը (Loro)	4,095,467—65	— —	4,095,467 65
բ) Բանկի հաշիւը (Nostro)	6,383,474—92	— —	6,383,474—92
8. Բաժինների հաշիւը կենտ. վարչութ. հետ.	— —	616,059—71	616,059 71
Կենտրօն. վարչութ. հաշիւը բաժին. հետ.	892,279—74	— —	892,279—74
9. Բանկի բաժնետոմսերու անվճար կտրօնների բաշխը	5,263—65	— —	5,263—65
10. Չը վճարուած տոկոսներ, աւանդների, ընթացիկ հաշիւների և այլ գործողութեանց	98,826—31	27,195—34	126,021—65
11. Ստացուած տոկոսներ և յանձնարարականներ	107,356—08	51,445—86	158,800—94
12. Փոխանցիկ գումարներ	119,551—38	68,573—96	188,125—34
13. Արդիւնք 1894 թ.	175,741—78	74,061—91	249,803—69
Ր. Ա.	18,686,849—91	3,720,080—47	22,406,930—38

Дозволено цензурою, Тифлисъ, 28 Апрѣля 1895 г. Типографія Канцел. Главнонач. Гражданск. частью на Кавказѣ, Лорисъ-Меликовская ул., д. каз.